Միջոցառումների պլան

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի 2012-2013 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի կենսագործման

Ը/Կ	Միջոցառման անվանումը	Պատասխանատու	ժամկետը
1	Ուսուցման պրոցեսը մշտապես վերահսկել գիտխորհրդի որոշումների պահանջների ոգով: Ամբիոններում հետազոտել և ֆակուլտետի գիտխորհրդին ներկայացնել ֆակուլտետի մասով համալասարանի գիտխորհրդի որոշումների կատարման ընթացքը:	դեկանատ	մշտական
2	Ամրապնդել կրթության գիտական հիմքերը, ներգրավել տեխնիկայի միջոցներ, գլխավոր ուղղություն ընտրել որակը /ամբիոններ/, ձեռնարկել որակի ապահովման կոնկրետ, գործնական միջոցառումներ, ապահովել որակի վերահսկման գործուն համակարգ /դեկանատ, ամբիոններ/:	ամբիոնների վարիչներ	տարվա ընթացքում
3	Առաջադիմության բարձրացման գործուն համակարգ ստեղծել, հետևել ուսանողների ինքնակրթությանը, ինտերնետից օգտվելուն, անհատական աշխատանքների ինքնուրույն կատարմանը, միջանկյալ քննությունները համապատասխանեցնել պետական չափորոշիչներին: Սերտորեն կապակցել անհատական աշխատանք-միջանկյալ քննություն գործընթացները, դրանք դիտելով ուսանողի ակտիվության դրսևորման կարևոր օղակ:	ամբիոններ, մասնագետ-դասախոսներ	տարվա ընթացքում
4	Որակի ապահովումը պահանջում է դասախոսությունների ընթացքի պարբերաբար ստուգում և արդյունքների վերլուծություն, լավագույն փորձի մասսայականացում:	դեկանատ, ամբիոններ	տարվա ընթացքում
5	Ուսանողի մեջ ձևավորել գիտելիքի ձեռք բերման պահանջ, ներարկել անձնային և մասնագիտական աճ ապահովելու ձգտում: Հետազոտել ուսանողի կողմից գիտելիքների, մասնագիտական ունակությունների ձեռք բերման դինամիկան, այս ուղղությամբ ամբիոններում առանձնացնել հետազոտությունների բաժին:	դասախոսներ	տարվա ընթացքում
6	Ներդնել նոր մեթոդներ և կրթական տեխնոլոգիներ /ամբիոններ/, դասախոսությունները նոր մեթոդների կիրառման հաշվին դարձնել մատչելի, դասախոսը պատասխանատվության զգացումով պետք է վերաբերի գիտելիքների յուրացմանը: Ամբիոնները պետք է ստուգեն դասախոսության հատույցը: Դասախոսը պետք է ստուգի դասախոսության յուրացման աստիճանը:	դասախոսներ	մշտական
7	Ռեալացնել գնահատման համակարգը՝ քննությունների պետական չափորոշիչներից չշեղվելու սկզբունքի հիման վրա: Այս գործում ակտիվացնել մասնավոր հատվածի դերը:	դեկանատ	մշտական
8	Ամբիոններն ապահովել մասնագետ դասախոսներով, հետևել կադրերի թարմացմանը:	դեկանատ	մշտական
9	Դասախոսների վերաբերյալ անցկացնել սոցիոլոգիական հարցումներ /տարին երկու անգամ/, կատարել դասախոսների ընտրություն՝ ուսանողների կողմից:	դեկանատ	ուսումնական տարվա ավարտին

10	Ամբիոնները զբաղվեն համապատասխան առարկաների գիտական զարգացումների ուսումնասիրությամբ և դասավանդման գործընթացում ներդրմամբ: Գիտամեթոդական աշխատանքին հաղորդել ծրագրված բնույթ: Յուրաքանչյուր դասախոս պետք է կատարի ամբիոնի կողմից հաստատված գիտահետազոտական աշխատանք, տպագրի տարեկան առնվազն երեք հոդված: Սահմանել լավագույն մասնագիտական հոդվածի համար մրցանակ: Մրցնակներ սահմանել ուսանողների գիտական հոդվածների համար:	ամբիոններ, դասախոսներ	մշտական
11	Ընդլայնել էկզամենեյշն համակարգով առարկայական քննությունների անցկացումը:	դեկանատ, ամբիոններ	տարվա ընթացքում
12	Դասախոսությունները համակարգչային եղանակով տրամադրել ուսանողությանը, այս հարցում թույլ չտալ բացառություններ: Ստուգել համակարգչին հանձնված դասախոսությունների գիտական որակը ամբիոնների կողմից, դրանք գրախոսել ամբիոնների մասնագետների կողմից: Ստուգել համակարգչային դասախոսություններին ուսանողների տեղեկացվածությունը սեմինարների ընթացքում: Դասախոսները լրացուցիչ նյութեր պետք է մտցնեն համակարգիչ տարվա ընթացքում՝ ըստ նոր ուսումնասիրությունների: Դասախոսություններին տալ գնահատական դրանք ուսումնասիրած ուսանողների կողմից:	դեկանատ, ամբիոններ, դասախոսներ	մշտական
13	Կրթական ծրագրերի և գործընթացների իրականացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հավաքել որակի վերաբերյալ տեղեկատվական համակարգում առկա տեղեկությունները և ըստ անհրաժեշտության վերլուծել: Գործատուներին ներգրավել կրթական ծրագրերի լրամշակման, նորացման գործընթացում:	ֆակուլտետի որակի ապահովման բաժին	ամենօրյա
14	Նկատի ունենալով առարկաների մեթոդիկան ուսումնասիրման և մատուցման նշանակությունը, ամբիոնները պետք է թարմացնեն առարկայական ուղեցույցները: Դասախոսները պետք է ունենան անհատական աշխատանքի ուղեցույց:	ամբիոններ	տարվա ընթացքում
15	Ուսումնասիրել մագիստրատուրայի պարապմունքների եղանակները, ուսանողների կողմից կատարվող գիտահետազոտական աշխատանքների որակը, համապատասխան ամբիոնների նիստերում քննարկել նման հարցեր:	ամբիոններ	հունիս 2013թ.
16	Պրակտիկաների կազմակերպման, նախապատրաստման ընթացքում հաշվի առնել բազային կազմակերպությունների առաջարկությունները, ուսանողներին իրազեկել դրանց: Ուսանողներին նախապատրաստել բանկերի հետ կնքված պայմանագրերով՝ թեստավորմանը: Պրակտիկաների արդյունքների ամփոփմանն ու գնահատմանը մասնակից դարձնել բազային ձեռնարկությունների ներկայացուցիչներին: Ֆակուլտետի խորհրդում քննարկել պրակտիկայի կազմակերպման նորովի մշակված ընթացակարգ:	դեկանատ, պրակտիկայի կազմակերպություններ	յուրաքանչյուր պրակտիկայի ավարտից հետո
17	Ամբիոնները պետք է ունենան ուսանողների դիտողությունների և առաջարկությունների մշտական գործող հարցարկղ:	ամբիոններ	մշտական
18	Տնտեսագետների ակումբում քննարկել ԳՊՀ-ի տնտեսագետ դասախոսների տպագրած գիտական հոդվածները: Հրավիրել դասախոսներին:	տնտեսագետների ակումբ	ամիսը մեկ անգամ
19	Միջոցառումների պլանը մշտապես մշակվում է: Այսուհետև ժամանակացույցով պետք է ցույց տանք միջոցառումների կատարման ընթացքը: Սա նշանակում է, որ մշտադիտարկումը պետք է շարունակվի և գործնական հատույց տա:	ամբիոններ	2013 սեպտեմբեր

ՏՖ դեկան՝ Ս. Գ. Ամիրխանյան